



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԱՌԱՋԱՑԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ

---

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ*  
ԿԱՐԻՆԵ ԿՈՒՅՈՒՄՉՅԱՆ

ՀՀ 2011թ. մարդահամարի  
համապետական հանձնաժողովի  
նիստ

# Ներկայացման կառուցվածքը

- ❑ ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի նախապատրաստական աշխատանքներն ըստ փուլերի՝ Սևան քաղաքում և Տավուշի մարզի չորս գյուղական համայնքներում,
- ❑ նախապատրաստման և անցկացման գործընթացում առաջացած հիմնախնդիրները,
- ❑ դրանց լուծմանը նպաստող առաջարկություններ, այդ թվում՝ հանձնարարականներ ակնկալող,
- ❑ մեթոդաբանական լուծումներ պահանջող հիմնախնդիրներ:

# ՀՀ 2010թ. Փորձնական մարդահամարի կազմակերպական աշխատանքներն ըստ փուլերի

◀◀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում.

- 2010թ. փորձնական մարդահամարի կազմակերպական աշխատանքների առաջին փուլով իրականացվեցին տների/շինությունների ցուցակների կազմման աշխատանքները,
- քաղաքի սխեմատիկ հատակագիծը, որը պատրաստվել և տրամադրվել էր «Հողշին մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի կողմից, բաժանվեց ցուցակագրման տեղամասերի,
- ներգրավվեցին 10 ցուցակագրողներ, ովքեր սահմանազատված տարածքներում 1 ամսվա ընթացքում կատարեցին քաղաքի տների/շինությունների ցուցակների կազմման աշխատանքները,
- ցուցակների հիման վրա կազմվեց փորձնական մարդահամարի անցկացման կազմակերպական պլանը-տարածքի բաժանումը մարդահամարային, հրահանգչական և հաշվային տեղամասերի, կադրերի հաշվարկ, նրանց ներգրավման և հրահանգավորման ժամանակացույց, զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիր,
- մարդահամարային կադրերի ներգրավում և ուսուցում,
- փորձնական մարդահամարի անցկացում` հաշվառում:

# Նախապատրաստման և անցկացման ընթացքում առաջացած հիմնախնդիրները

- ❑ Քաղաքում հիմնականում տեղադրված չէին փողոցների անվանացույցերը և բացակայում էին շինությունների համարանիշերը (բուն հաշվեգրման ընթացքում՝ հոկտեմբերի 21-30-ը, հիմնախնդիրը մեղմվել էր՝ շինությունների վրա կավիճով մակնշման եղանակով):
- ❑ Բնակչության հաշվեգրման ընթացքում մարդահամարի ամենակարևոր պայմանի՝ հաշվառման ամբողջականության ապահովման համար անհրաժեշտ բնակելի միավոր-հարցաթերթ նույնականացումը կատարվել է մեծ դժվարությամբ՝ տվյալ բնակարանի համար երբեմն երեք և ավելի հասցեների *1անձնագիր - բնակարանի սեփականության իրավունքի վկայական - սխեմատիկ հատակագիծ* փողոցի անվանանշմամբ և բնակարանի համարով/ (սխեմատիկ հատակագծի վրա արդիականացված անվանումներով հասցեները չեն համապատասխանել բնակարանի սեփականության իրավունքի վաղ տրված վկայականուն և անձանց ավելի վաղ տրված անձնագրերում այլ անվանումներով առկա հասցեներին) առկայության պատճառով:

# Հիմնախնդիրների լուծումներին նպաստող առաջարկություններ

1. Սխեմատիկ հատակագծում նշված հասցեների և համայնքի հասցեային տնտեսության միջև առաջացած անհամապատասխանությունները կարգավորելու համար, նպատակահարմար է, որպեսզի համայնքների կողմից պատրաստվի տեղեկանք՝ վերջին 2 տարիների ընթացքում փողոցների անվանումների փոփոխության վերաբերյալ, որը ՀՀ ԱԿԾ աշխատակազմի համապատասխան մարզային գործակալության տարածքային բաժնի կողմից կզետեղվի սխեմատիկ հատակագծի անկյունում (ինչի կապակցությամբ՝ հայցվում է համապատասխան հանձնարարական համայնքների ղեկավարներին):

(շարունակություն)

2. Բուն մարդահամարի անցկացման ժամանակ անհրաժեշտ է հիշատակված խնդիրների շրջանակում առավել ընդլայնված ուսուցողական ծրագրեր կազմակերպել մարդահամարի կազմակերպման և անցկացման նպատակով ներգրավված ժամանակավոր աշխատակազմի՝ մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների, հրահանգիչ-հսկիչների, հաշվարարների և հատկապես ցուցակագրողների համար:
  
3. Ցանկալի է, որ 2011թ. ընթացքում, մինչ բուն մարդահամարը՝ հոկտեմբերի 12-21-ը, գեթ ՀՀ բոլոր քաղաքային համայնքներում և 5000 ու ավելի բնակչություն ունեցող գյուղական համայնքներում հնարավորության դեպքում իրագործվեն հասցեային տնտեսության (ցուցանակների տեղադրման եղանակով) ամբողջացման աշխատանքներ: Սույն խնդրի կարևորությունը պայմանավորված է ոչ միայն մարդահամարի ամբողջականության խնդրի պահանջներով, այլև հետմարդահամարային համապետական ընտրանքային հետազոտությունների համար, տնային տնտեսությունների հասցեային տեղեկատվական բազայի ձևավորման համար:

# ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի, Գետահովիտի, Խաշթառակի և Աչաջուրի գյուղական համայնքներում

- ❑ 2010թ. փորձնական մարդահամարի կազմակերպական աշխատանքների առաջին փուլով համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների կողմից իրականացվեցին գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմման աշխատանքները, ինչպես նաև պատրաստվեցին համայնքում հաշվառված և ժամանակավոր բնակվողների ցուցակներն ըստ համայնքում վարվող տնտեսությունների հաշվառման գրքերի և ցուցակների,
- ❑ դրանց հիման վրա կազմվեց տարածքի կազմակերպական պլանը՝ տարածքի բաժանումը մարդահամարային, հրահանգչական և հաշվային տեղամասերի, կադրերի հաշվարկ, նրանց ներգրավման և հրահանգավորման ժամանակացույց, զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիր,
- ❑ մարդահամարային կադրերի ներգրավում և ուսուցում,
- ❑ փորձնական մարդահամարի անցկացում՝ հաշվառում:

## Բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմման և հաշվառման ընթացքում առաջացած հիմնախնդիրը

- Գյուղական համայնքների կողմից վարվող համայնքների գրքերում առկա էին որոշ դեպքեր, երբ գրառված էին մնացել տնային տնտեսությունների բացակա անդամների վերաբերյալ տվյալներ կամ գրառումներ այն տնային տնտեսությունների վերաբերյալ, որոնք ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից համայնքի հաշվառումից հանված են եղել (դուրս են գրվել):
- Պատասխանողները չեն նշում տնային տնտեսության բացակա անդամների մասին, կամ պնդում են որ տեղյակ չեն, որ իրենց տ/տ անդամ/ներ/ը այլևս հաշվառված չ/է/են իրենց տանը, նույնիսկ այլ երկրի քաղաքացի է/են, ինչը կարող է պայմանավորված լինել գրքերում գրառումների թերությանը, սակայն չի բացառվում նաև տ/տ անդամի անտեղյակությունը կամ թաքցնելու միտումը:



# Հիմնախնդրի լուծմանը նպաստող առաջարկություններ

1. Գյուղական համայնքներում համայնքի գրքերի վարման վերաբերյալ սահմանված կարգի համաձայն, յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ տնային տնտեսություններ այցելելով գրառումներ կատարելուց հետո, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը պարտավոր է յուրաքանչյուր տնային տնտեսության գլխավորին ծանոթացնել տվյալ տնային տնտեսության վերաբերյալ կատարված գրառումներին և տնային տնտեսության գլխավորը պետք է դրանց վերաբերյալ իր համաձայնությունը համայնքի գրքի սահմանված հատվածում հաստատի ստորագրությամբ, ինչի կապակցությամբ հայցվում է մարզպետների հանձնարարականը մարզպետարանների տարածքային վարչություններին՝ աջակցելու ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններին գյուղական համայնքի գրքերի վարման գործընթացում:
2. Իրավիճակի ուսումնասիրման նպատակով, ցանկալի է տեղծել հանձնաժողով և կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել մարզպետին, ով էլ, ըստ անհրաժեշտության, կտա համապատասխան հանձնարարականներ հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ:

(շարունակություն)

3. 2011թ. կիրառության մեջ մտնող համայնքների նոր գրքերը (հաստատված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010թ. հոկտեմբերի 4-ի թիվ 28-Ն որոշմամբ, հրապարակված ՀՀ ԳՆԱՏ 2010 թ. նոյեմբերի 15-ի թիվ 27 (379)) գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից լրացնելուց առաջ, հատկապես երկարատև բացակայողների վերաբերյալ կասկած հարուցող գրառումներն անհրաժեշտ է ճշգրտել ՀՀ Ոստիկանության անձնագրային բաժինների հետ (ինչի կապակցությամբ՝ հայցվում է հանձնարարական ՀՀ ոստիկանության անձնագրային բաժինների պատասխանատուներին նշված գործընթացի կանոնակարգմանն ուղղված աշխատանքներում գյուղական համայնքների ղեկավարներին օժանդակություն ցույց տալու համար):

ՀՀ 2010 թվականի փորձնական մարդահամարի հարցաթերթի,  
մասնավորապես, «Տնային տնտեսության գյուղատնտեսությամբ  
զբաղվելուն» վերաբերող հարցերի լրացման ընթացքում առաջացած  
հիմնախնդիրը

- Հաշվեգրման ժամանակ որոշ գյուղացիական տնտեսություններ հրաժարվել են տնտեսության սեփականություն հանդիսացող հողաչափերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուց, պատճառաբանելով, որ գրավոր դիմել են գյուղապետարան՝ իրենց սեփականաշնորհված հողից հրաժարվելու պահանջով, սակայն տվյալ պահի դրությամբ այն դեռևս օրինական ընթացք չի ստացել: Գյուղապետարաններում պատճառաբանվում է, որ սեփականաշնորհված հողերի ետ վերցնելու գործընթացն իրականացվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից և կան որոշակի դրամական վճարներ, որ քաղաքացին չի կատարում, հետևաբար, տվյալ գործընթացը չի համարվում ավարտված: Նման դեպքերում ըստ գյուղապետարանի այդ հողերը դեռևս իրավական առումով տնային տնտեսությանն են պատկանում, իսկ տնտեսությունը պնդում է, որ ինքը գրավոր դրա օգտագործումից հրաժարվել է, հետևաբար, այն փաստացի իրեն չի պատկանում:

## (շարունակություն)

- Հիմնախնդրի բարդ լինելու կապակցությամբ, դրա լուծմանը նպաստող որևէ առաջարկություն, ցավոք, չի ներկայացվում, սակայն ՀՀ ԱՎԾ-ն նախաձեռնելու է մեթոդաբանական քննարկումներ առ այն, թե արդյոք հարկ է նման դեպքում հողատարածքների վերաբերյալ ցուցանիշները այլ աղբյուրներից հայթայթել և ներառել համապատասխան համայնքի ցուցանիշներում, թե ոչ: Մեթոդաբանական քննարկումներն էլ ունեն սահմանափակում տնային տնտեսության հարթության մեջ, քանզի անվանական տվյալները գաղտնի են և հրապարակման ենթակա չեն, իսկ հարցի լուծումը միայն համայնքի մակարդակով չի կարող ամբողջական համարվել, քանի որ այն հակասություններ կառաջացնի ագրեգացված և դեգագրեգացված ցուցանիշների հանրագումարներում: Ավելին, վիճակագրական գործառույթների պատասխանատուներն իրավունք չունեն վիճակագրական նպատակով հավաքագրվող անվանական տվյալները տրամադրելու վարչական լիազորություններ տիրապետող մարմիններին, ստուգաձշտման և այլ նպատակներով:

# Այլ հիմնախնդիրներ

- Փորձնական մարդահամարի իրականացման մյուս փուլերում առաջացած մի շարք հիմնախնդիրներ զուտ մեթոդաբանական լուծումներ են պահանջում, որոնք հիմնականում կապված են աշխատողների հնարավորինս խորացված ուսուցման հետ, ինչը ենթադրում է ֆինանսական միջոցների առկայություն, ինչպես նաև բնակչության իրազեկմանն ուղղված հարցեր, մասնավորապես, բարձրագույն կրթություն ունեցող և ըստ մասնագիտության աշխատելու հնարավորություն չունեցող գյուղաբնակ անձանց զբաղվածությանը վերաբերող հարցերի լրացմանն առ այն, որ գոյամիջոցն ապահովելու համար իրականացված գյուղատնտեսական աշխատանքները չեն կարող համարվել զբաղվածություն: Ինչնիցե, ՄԱԿ-ի մեթոդաբանությամբ նրանք համարվում են զբաղվածներ և միջազգային մեթոդաբանության հետ վեճերը տվյալ դեպքում զուրկ են հեռանկարից՝ անկախ վիճարկողի կողմից որդեգրած տրամաբանության ուղղուց: